



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent
Matt Hill, Ed.D.

9 April 2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Շնորհակալություն ձեր համբերատարության և համագործակցության համար, քանի դեռ մենք շարունակում ենք ուսումնական տարին հեռակա ուսուցման միջոցով: Մենք կշարունակենք հիմնվել մեր ձեռքբերած հաջողությունների վրա և միասին կհաղթահարենք բոլոր խոչընդոտները: Խնդրում եմ ծնողներին/պահապաններին շարունակել աշխատել երեխաների հետ ամեն օր նույն ռեժիմով, եթե հնարավոր է:

- Գնահատականներ, կրեդիտներ և կրեդիտների վերականգնում.** Մենք դեռ շարունակում ենք վերանայել Կալիֆոռնիայի կրթական գրասենյակի ուղեցույցները գնահատականների վերաբերյալ, խորհրդակցում ենք դպրոցական այլ շրջանների հետ այդ առումով և հանդիպում ուսուցիչների հետ, թե ինչպես գնահատել երեխաներին այս վերջին կիսամյակի ընթացքում: Մենք հասկանում ենք, թե ինչ ազդեցություն ունեն գնահատականները երեխաների վրա և մենք այն կհիմնավորենք հնարավորին չափ հավաքված տեղեկատվության վրա: Այնուամենայնիվ, մենք որոշել ենք, թե ինչպես գնահատել հանձնարարությունները հեռակա ուսուցման մոդելի միջոցով: Մենք կարծում ենք, որ ավանդական գնահատման համակարգը չի կարող իրականացվել այնպես, որ արդար լինի և՛ աշակերտների, և՛ ուսուցիչների համար: Ուսումնական տարվա մնացած մասի ընթացքում, մենք ուշադրություն կդարձնենք աշակերտների կրթական հնարավորությունների վրա՝ միաժամանակ հնարավորություն տալով ստանալ կրեդիտ: **Մարտի 13-ից հետո հանձնարարված բոլոր աշխատանքի համար կկիրառվեն հետևյալ ուղեցույցները.**

- Ուսուցիչները տառային կամ թվային գնահատականով չեն գնահատի աշխատանքները, բայց կպատասխանեն աշակերտների հարցերին և կստուգեն աշխատանքները:
- Ուսուցիչները կորոշեն, թե արդյոք աշխատանքն ընդունելի է, թե՞ պետք է նորից կատարել:

- Ուսուցիչները չեն կրկնօրինակի գնահատման ձևն ինչպես որ անում են դասասենյակում, այսինքն ոչ մի գնահատական չի դրվի Էրիս ցանցում կամ Գուգլ դասասենյակում:
 - Ուսուցիչները կարող են կամավոր, բայց ոչ պարտադիր, դասընթացներ կազմակերպել: Մենք հաշվի ենք առնում ընտանիքների և նրանց օրվա ռեժիմի սահմանափակումները: Այսպես ասած, խրախուսելի է մասնակցել դասընթացներին, բայց այն պետք է փոփոխական լինի այն աշակերտների համար, ովքեր չեն կարող մասնակցել: Այն կարող է կատարվել ուղղակի ուսուցման մինչև իսկ կրթական բաց նստաշրջանների միջոցով:
 - Հեռակա ուսուցման ընթացքում, ուսուցիչները պետք է դասարանական աշխատանքի միայն 50%-ն առաջարկեն երեխաներին: Քանի որ մի քանի ժամ անընդմեջ էկրանի առջև նստելը և ուսուցչի հետ չփոփոխվելը կառաջացնի հոգեկան հոգնածություն և ծանրաբեռնվածություն:
2. **Տարեվերջյան միջոցառումներ.** Քանի որ տեսանելի ապագայում, դեռ պետք է հետևել «մնալ տանը անվտանգ» հրամանին, Բրբենք և Ջոն Բրոգ միջնակարգ դպրոցները պետք է չեղյալ համարեն մայիս ամսվա սկզբին կայանալիք ավարտական խնջույքը (Senior Proms) այլընտրանք չունենալու պատճառով: Այս պահին, մենք վերջնական որոշում չենք կարող կայացնել տարեվերջյան ավարտական և փոխադրման արարողությունների վերաբերյալ: Մենք կշարունակենք հետևել նահանգային հանրային առողջապահական գրասենյակների նորություններին և բազմաթիվ իրավիճակներ կմշակենք հիմնվելով նրանց տված տեղեկատվության վրա:
3. **Տեխնիկական աջակցություն ընտանիքների համար.** Այն ընտանիքները, որոնց տեխնիկական օգնություն է հարկավոր շրջանի կողմից տրված սարքերի համար կամ հարցեր ունեն Գուգլ դասասենյակի վերաբերյալ, խնդրում ենք լրացնել ներքոիշյալ Գուգլ փաստաթուղթը: Ահա կայքէջը.
<https://forms.gle/NJcdUsESjaeBonrv9>

Շարունակելով աշխատել միասին, մենք կուժեղացնենք ԲԴՄՇ-ն: Դպրոցական շրջանի նորությունների հաջորդ թողարկումը կստանաք հաջորդ **հինգշաբթի, ապրիլի 16-ին:**

Հոգատարությամբ,

Մաթ



Դոկտոր Մաթ Հիլլ
 Գերատեսուչ